ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87 Ա

«14» 03 2022թ.

**ՈՐՈՇՈՒՄ No. 699/18-Ա**

**Դրոշմանիշային վճարի գծով չկատարված պարտավորությունները գանձելու մասին**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով անհատ ձեռնարկատեր Կարեն Հասրաթյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ**

Համաձայն եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական, եկամտային հարկի պարզեցված, շահութահարկի տարեկան հաշվարկների և միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունների՝ անհատ ձեռնարկատեր Կարեն Հասրաթյանի (ՀՎՀՀ՝ 79801777, ՀԾՀ՝ 3510620275, նույն. քարտ՝ 006160907, հասցե՝ Սյունիք, Սիսիան, 4 փ., 8-1, պետ. հաշվառման համարը՝ 88.00028) նկատմամբ 15.02.2022թ. հարուցված վարչական վարույթի շրջանակներում դրոշմանիշային վճարի գծով գանձման ենթակա պարտավորությունը կազմում է 79.000 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից Կարեն Հասրաթյան Ա/Ձ-ի վերաբերյալ 31.03.2021թ. կայացվել է թիվ 476/18-Ա որոշումը, որի մեջ 15.02.2022թ. դրությամբ դրոշմանիշային վճարի գծով առկա պարտավորությունից ներառված է 49.000 ՀՀ դրամ գումարը:

Կարեն Հասրաթյան Ա/Ձ-ի կողմից 18.01.2022թ-ին ներկայացված 2021թ. միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության արդյունքում դրոշմանիշային վճարի գծով առաջացել է 18.000 ՀՀ դրամ պարտավորություն, ինչի վճարման ժամկետը սահմանված է մինչև 20.04.2022թ-ը:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը կազմում է **12.000 ՀՀ** դրամ, որն առաջացել է 2020թ-ի միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունից:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 59-րդ, 88-րդ հոդվածներով,

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Կարեն Հասրաթյան Ա/Ձ-ից գանձել **12.000 ՀՀ** դրամ դրոշմանիշային վճարի գծով պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ**
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝**

***Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:***

Կատարող՝ ԻՎ հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման
ապահովման բաժնի առաջատար մասնագետ
Աննա Պետրոսյան, հեռ.010-30-91-91 /91-69/: